

ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

«ՓՄՁ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՍՈՑԻԱՑԻԱ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԿՈԼԵԿՏԻՎ ՀԱՆՐԱԳՐՈՎ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ՝
«ՀՀ ԱԺ-ի ԿՈՂՄԻՑ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 25-ԻՆ ԸՆԴՈՒՆՎԱԾ՝
«ՀՀ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՕ 340-Ն ԵՎ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 12-ԻՆ
ԸՆԴՈՒՆՎԱԾ՝ «ՀՀ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՕ-285-Ն ՕՐԵՆՔՆԵՐՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ,
ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ «ՀՀ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (Կ-960-11.11.2024-SՀ-011/1)
ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԻԾՆ ԵՐԿՐՈՐԴ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ՉԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ»
ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Համաձայն «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 123
1-րդ հոդվածի 4-րդ մասի և «Հանրագրերի մասին» օրենքի 13-րդ հոդվածի՝ 2025
թվականի մարտի 26-ին ՀՀ ԱԺ նախագահի կողմից ՀՀ ԱԺ տնտեսական հարցերի
մշտական հանձնաժողով հասցեագրված կոլեկտիվ հանրագրի (Այսուհետ՝
հանրագիր)՝ ուժը կորցրած ճանաչել՝

1 #2023 թ -ի հոկտեմբերի 25-ին, ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունված ՀՕ-
340-Ն օրենքը,

2 2024 թ -ի հունիսի 12-ին ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունված ՀՕ-285-
ն օրենքը,

3 #Երկրորդ ընթերցմամբ չընդունել «ՀՀ հարկային օրենսգրքում լրացումներ
և փոփոխություններ կատարելու մասին» (Կ-960-11.11.2024-SՀ-011/1) օրենքի

նախագիծը, առաջարկությունների վերաբերյալ ներկայացնում ենք հետևյալ եզրակացությունը: #

Հանրագրի շրջանակներում, ՓՄՁ համագործակցության ասոցիացիա» հասարակական կազմակերպության կողմից առաջարկվում է վերանայել ՀՀ հարկային օրենսգրքի գործող իրավակարգավորումները, մասնավորապես՝ ուժը կորցրած ճանաչել ՀՀ Ազգային ժողովի կողմից 2023 թվականի հոկտեմբերի 25-ին ընդունված՝ «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-340-Ն և 2024 թվականի հունիսի 12-ին ընդունված՝ «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-285-Ն օրենքների՝ 2025 թվականի հունվարի 1-ից ուժի մեջ մտնող դրույթները, ինչպես նաև երկրորդ ընթերցմամբ չընդունել «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» (Կ-960-11.11.2024-SՀ-011/1) օրենքի նախագիծը:

Հանրագրով ներկայացված հիմնավորման համաձայն առաջարկվում է վերացնել փոքր բիզնեսի համար սահմանված վատթարացնող հարկային փոփոխությունները, որոնք հանգեցնում են շրջանառության հարկի դեֆորմացիայի և խախտում շրջանառության հարկի ռեժիմի գաղափարախոսությունը՝ պարզության, կանխատեսելիության և արդարության սկզբունքները, ինչպես նաև՝ չընդունել հաշվապահական և իրավաբանական ծառայությունների մասով հարկային բեռ ավելացնող դրույթները:

ՀՀ ԱԺ տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովը ուսումնասիրել է «ՓՄՁ համագործակցության ասոցիացիա» հասարակական կազմակերպության կողմից հանրագրով վերը ներկայացված առաջարկությունների հիմնավորվածության հարցը և դրա ընդունումը համարել ոչ նպատակահարմար, ելնելով հետևյալ նկատառումներից

1. ՀՀ Ազգային ժողովի կողմից 2023 թվականի հոկտեմբերի 25-ին ընդունված՝ «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-340-Ն օրենքի ընդունումը նպատակ ունի կարգավորել շրջանառության հարկ վճարողների կողմից ապրանքների ձեռք բերման գործարքների փաստաթղթավորման հետ կապված հարաբերությունները՝ մի կողմից նվազեցնելով տնտեսության մեջ ապրանքներն առանց փաստաթղթավորման շրջանառելու ռիսկերը, մյուս կողմից՝ բարձրացնելով հարկային վարչարարության արդյունավետությունը: Հարկ է նշել, որ մինչև նշված օրենքի ընդունումը, Հարկային օրենսգրքով սահմանված չի եղել որևէ հսկողական մեխանիզմ, որը հնարավորություն կտար ստուգելու շրջանառության հարկ վճարողների կողմից ապրանքների ձեռք բերման գործարքների փաստաթղթավորման պահանջների պահպանումը: Արդյունքում, ստեղծված իրավիճակը մի կողմից նպաստել է շրջանառության հարկ վճարողների կողմից առանց փաստաթղթավորման ապրանքների ձեռքբերմանը և առանց հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառության հետագա օտարմանը, մյուս կողմից՝ շրջանառության հարկ վճարողներին ապրանք մատակարարողների իրացման շրջանառությունների իրական ծավալների թերհայտարարագրմանը:

2. Շրջանառության հարկի համակարգի՝ որպես հարկման հիմնական համակարգին այլընտրանքային համակարգի, հիմնական նպատակն ի սկզբանե տնտեսավարող սուբյեկտների համար պարզ հարկային հաշվառման և մեղմ վարչարարության պայմաններում գործունեություն ծավալելու հնարավորության ապահովումն է եղել: Խնդիրը կայանում է նրանում, որ հարկային քաղաքականության շրջանակներում իրականացված ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ շրջանառու-

թյան հարկի համակարգը հարկման ընդհանուր համակարգին այլընտրանքային համակարգ լինելու փոխարեն վերածվել է հարկման արտոնյալ համակարգի: Մասնավորապես, տնտեսական գործունեության առանձին ոլորտներում համեմատվել են հարկման ընդհանուր համակարգի (ԱԱՀ և շահութահարկ) և շրջանառության հարկի համակարգի հարկային բեռերը: Արդյունքում պարզվել է, որ գրեթե բոլոր ոլորտներում (բացառություն են կազմում այն ոլորտները, որոնցում կատարվող հիմնական գործարքներն ազատված են ԱԱՀ-ից) հարկման ընդհանուր համակարգի հարկային բեռն անհամեմատ ավելի բարձր է, քան շրջանառության հարկի բեռն է: Վերոգրյալը նկատի ունենալով՝ ՀՀ Ազգային ժողովի կողմից 2024 թվականի հունիսի 12-ին ընդունված՝ «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-285-Ն օրենքով 2025 թվականի հունվարի 1-ից վերանայվել են գործունեության հիմնական տեսակների՝ առևտրական (առք ու վաճառքի) գործունեություն, արտադրական գործունեություն, հանրային սննդի ոլորտում իրականացվող գործունեություն, այլ գործունեություն) համար սահմանված շրջանառության հարկի դրույքաչափերը: Ընդ որում, հարկ է նկատել, որ սահմանվել են ներկայումս գործող նվազագույն կամ հաստատուն դրույքաչափերից ցածր դրույքաչափեր, որոնց պարագայում փաստաթղթավորման պատշաճ մակարդակ ունեցող տնտեսավարող սուբյեկտների համար հարկային բեռը կարող է նվազել: Այնուամենայնիվ, հաշվի առնելով այն հանգամանքը, որ 2025 թվականի հունվարի 1-ից ուժի մեջ մտած հարկման նոր կանոնների պայմաններում առևտրական (առք ու վաճառքի) գործունեությամբ զբաղվող շրջանառության հարկ վճարողներից շատերը 2025 թվականի հունվարի 1-ի դրությամբ ունեցել են նախկինում ձեռք բերված զգալի ապրանքային մնացորդներ, ՀՀ կառավարության 2025 թվականի փետրվարի 27-ի «Առևտրական (առք ու վաճառքի)

գործունեություն իրականացնող շրջանառության հարկ վճարող տնտեսավարող սուբյեկտների աջակցության ծրագիրը հաստատելու մասին» թիվ 222-Ն որոշմամբ ՀՀ կառավարության կողմից հաստատվել է համապատասխան աջակցության ծրագիր, որի շրջանակում ՀՀ կառավարությունը կաջակցի, որպեսզի շրջանառության հարկ վճարողները կարողանան ցածր հարկային բեռի միջավայրում իրացնել ինչպես նախկինում առանց փաստաթղթերի ձեռք բերած ապրանքները, այնպես էլ 2025 թվականի հունվարի 1-ի դրությամբ առկա՝ փաստաթղթերով հիմնավորված ապրանքների մնացորդները: Ընդ որում, եթե հարկ վճարողները, օգտագործելով ՀՀ կառավարության աջակցության այս անցումային ժամանակահատվածը, իրենց ձեռնարկատիրական գործունեության մոդելը վերանայեն այնպես, որ 2025 թվականի հուլիսի 1-ից հետո ձեռքբերումները և այլ ծախսերը կատարեն առավելապես փաստաթղթավորմամբ, ապա ոչ միայն հարկային բեռի բարձրացում չի լինի, այլ նաև կարող է լինել հարկային բեռի նվազեցում:

3. Ներկայումս ՀՀ-ում իրականացվող հարկային քաղաքականությունը ուղղված է հարկման հատուկ համակարգերի կիրառության շրջանակի աստիճանաբար կրճատմանն ու հիմնական ուղղությունների, այն է՝ մասնագիտական բնույթ ունեցող աշխատանքների կատարումն ու ծառայությունների մատուցումը հարկման հատուկ համակարգերից դուրս բերելուն: Այս կերպ ակնկալվում է կրճատել նաև հարկման ընդհանուր համակարգում առկա հարկային բեռի և շրջանառության հարկի համակարգի հարկային բեռի միջև առկա էական տարբերությունը: Վերոգրյալը նկատի ունենալով՝ ՀՀ Ազգային ժողովի կողմից ս.թ. մարտի 26-ին ընդունվել է «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-72-Ն օրենքը, որով սահմանափակվել է մի շարք գործունեության տեսակների

կազմակերպումը շրջանառության հարկի և միկրոձեռնարկատիրության հարկման համակարգերում:

Ուստի, ելնելով վերը նշված դիտարկումներից, հանրագրով ներկայացված առաջարկությունների ընդունումը համարում ենք ոչ նպատակահարմար: